

ՀՏԴ՝ 808.1

DOI: 10.52971/18294316-2024.27.2-80

ՄԱՐԳԻՍ ՎԱՀԱԳՆԻ «ԱՐՇԻԼ ԿՈՐՔԻ»
ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՎԵՊԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԵՐՈՍԸ

Գագիկ Վ. Խաչիկյան

Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան, Գյումրի, ՀՀ

Ամփոփում

Նախաբան. Մեր հոդվածի նպատակն է սփյուռքահայ գրող Ս. Վահագնի «Արշիլ Կորքի» կենսագրական վեպի գլխավոր հերոսի՝ Ա. Գորկու կերպարը ներկայացնել գրողի նախասիրած գրական սկզբունքների շրջանակում: Նորովի ըմբռնվող իրապատկության /ռեալիզմ/ պատկերացումներով առաջնորդվելով՝ հեղինակը ստեղծել է մասնագետների շրջանում միջազգային ճանաչման արժանացած արատրակտ-էքսպրեսիոնիզմի /վերացական-արտահայտչապաշտություն/ ներկայացուցիչ, ամերիկահայ նկարիչ Արշիլ Գորկու՝ Ոստանիկ Ադոյանի /1902-1948թթ./ գեղարվեստական կերպարը: Մեթոդներ և նյութեր. Սփյուռքահայ գրականության պատմության մեջ Ս. Վահագնը համարվում է «նոր կարոտի գրականության» ճանաչված դեմքերից մեկը: Վերլուծություն. Կենսագրական վեպում հեղինակը, պատկերելով Ա. Գորկու մարդկային ու ստեղծագործական ճակատագիրը, մի կողմից ցույց է տվել 1915 թ. արևմտահայության ցեղասպանության ողբերգական հետևանքները՝ կոտորածներից փրկված և ԱՄՆ-ում հաստատված հայ մարդու կյանքի միջոցով, մյուս կողմից՝ բացահայտել նշանավոր սփյուռքահայ արվեստագետի՝ օտար միջավայրում ինքնահաստատվելու ազգային ու անհատական, ինքնատիպ ստեղծագործական ընդունակությունների դրսևորման հիմքերը: Այդ գործընթացում կարելի է ընդգծել թերևս ընդհանրապես հայ մարդու մարդաբանական արմենոիդ տեսակի՝ կեցության փորձություններին յուրովի դիմակայելու գործոնը: Արդյունքներ. Վեպի հեղինակի գերխնդիրն է եղել Ա. Գորկու ստեղծագործությունների մեջ բացահայտել նրա հայկականության դրսևորման առանձնահատկությունները: Ս. Վահագնի

«Արշիլ Գորքի» վեպը արժեքավոր ձեռքբերում է ոչ միայն գրողի ստեղծագործության մեջ, այլև սփյուռքահայ և ընդհանրապես արդի հայ կենսագրական վեպի բնագավառում:

Բանալի բառեր՝ Մարգիս Վահագն, Արշիլ Գորկի, կենսագրական վեպ, սփյուռքահայ գրականություն, նոր կարոտի գրականություն, վերացական արտահայտչապաշտություն:

Ինչպես հղել՝ Խաչիկյան Գ. Մարգիս Վահագնի «Արշիլ Գորքի» կենսագրական վեպի գլխավոր հերոսը // ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի: 2024: Ն. 2 (27): 80-93 էջեր: DOI: 10.52971/18294316-2024.27.2-80

THE PROTAGONIST OF THE BIOGRAPHICAL NOVEL “ARSHILE GORKI” BY SARGIS VAHAGN

Gagik V. Khachikyan

Shirak State University after M. Nalbandyan, Gyumri, RA

Abstract

Introduction: The purpose of the article is to present the image of Arshile Gorky, the main character of the biographical novel by the Armenian diaspora writer S. Vahagn “Arshile Korki”, within the framework of the writer’s favorite literary method. This is realism, understood in a new way, guided by which the author created an artistic image of the American artist of Armenian origin Arshile Gorky – Vostanik Adoyan (1902-1948), a representative of the abstract expressionist movement, who received international recognition among experts. **Methods and Materials:** S. Vahagn is considered to be one of the main figures in the history of Armenian diaspora. **Analysis:** Depicting the human and creative fate of A. Gorky in the biographical novel, he, on the one hand, showed the tragic consequences of the Genocide of Western Armenians in 1915 through those who survived the massacre and settled in the United States, on the other hand, he revealed the national and individual self-affirmation of the famous artist in a foreign environment, the basis for the manifestation of original creative abilities. In this process one can emphasize the factor of the anthropological Armenoid type of the Armenian personality as a whole, which is capable of uniquely withstanding trials. **Results:** The main task of S. Vahagn was to reveal the peculiarities of the manifestation of the Armenian essence. S. Vahagn’s novel ‘Arshile Korki’ is a valuable achievement not only in the writer’s work, but also in the field of the Armenian diaspora and the modern Armenian biographical novel in general.

Key words: *Sargis Vahagn, Arshile Gorky, biographical novel, literature of the Armenian diaspora, literature of new nostalgia, abstract expressionism.*

Citation: Khachikyan G. *The Protagonist of the Biographical Novel "Arshile Gorki"* by Sargis Vahagn // "Scientific Works" of SCAS NAS RA, Gyumri, 2024, V. 2 (27), 80-93 pp., DOI: 10.52971/18294316-2024.27.2-80

ГЛАВНЫЙ ГЕРОЙ БИОГРАФИЧЕСКОГО РОМАНА САРГИСА
ВААГНА «АРШИЛ ГОРКИ»

Գաղիկ Վ. Խաչիկյան

Ширакский государственный университет им. М. Налбандяна, Гюмри, РА

Аннотация

Введение: Цель статьи – представить образ Аршила Горкого, главного героя биографического романа диаспорального армянского писателя С. Ваагна «Аршил Корки», в рамках излюбленного писателем литературного метода. Это реализм, понимаемый по-новому, руководствуясь которым автор создал художественный образ американского художника армянского происхождения Аршила Горки – Востаника Адоояна (1902-1948), представителя абстрактно-экспрессионистского направления, получившего международное признание среди специалистов. **Методы и материалы:** С. Ваагна принято считать одной из главных фигур в истории армянской "диаспоральной новой ностальгической литературы" /Г.Севан/. **Анализ:** Изображая в биографическом романе человеческую и творческую судьбу А. Горкого, он, с одной стороны, показал трагические последствия Геноцида западных армян 1915 года через, переживших резню и поселившихся в США, с другой стороны, он раскрыл национальное и индивидуальное самоутверждение знаменитого художника в зарубежной среде, основы проявления оригинальных творческих способностей. В этом процессе, возможно, можно подчеркнуть фактор антропологического арменоидного типа армянской личности в целом, способной уникальным образом противостоять испытаниям. **Результаты:** Основной задачей С. Ваагна было раскрытие особенностей проявления армянской сущности. Роман С. Ваагна «Аршил Корки» является ценным достижением не только в творчестве писателя, но и в области армянской диаспоры и современной армянской биографической новеллы в целом.

Ключевые слова: Ваагн Саргис, Аршил Горки, биографический роман, литература армянской диаспоры, литература новой ностальгии, абстрактный экспрессионизм.

Как цитировать: Խաչիկյան Գ. *Главный герой биографического романа Саргиса Ваагна «Аршил Горки»* // "Научные труды" ШИЦАИ НАН РА. Гюмри, 2024. Т.2 (27). 80-93сс.. DOI: 10.52971/18294316-2024.27.2-80

ՆԱԽԱԲԱՆ. Արդի հայ գրականության մեջ կենսագրական վեպի բնագավառը համալրեց սփյուռքահայ ճանաչված գրող Սարգիս Վահագնի /Փաթափության/ 2004 թ. Լոս Անջելեսում տպագրված «Արշիլ Գորքի» վեպը [8]: Այս վեպի զլխավոր հերոսը 20-րդ դարի ամերիկահայ գեղանկարիչ Ոստանիկ /Մանուկ/ Ադոյանն է /1902-1948/, որը հանրահայտ է դարձել Արշիլ Գորկի ծածկանունով: Սփյուռքահայ գրողի կենսագրական վեպում ԱՄՆ-ում 1920-ական թթ. հանգրվանած և միջազգային ճանաչման արժանացած նկարչի կերպարը գեղարվեստորեն կերտված հաջող փորձերից է և նկարչի նաև կյանքի ու ստեղծագործության հիմնական առանձնահատկություններին ծանոթանալու լավագույն հնարավորություններից մեկը: Նկատենք, որ Ա.Գորկու մասին հայերեն և անգլերեն տպագրվել են հոդվածներ, գրքեր, Ա. Էգոյանի «Արարատ» ֆիլմում ստեղծվել է նրա կերպարը: Ուշագրավ է հատկապես պրոֆեսոր Կառլեն Սուրադյանի՝ ԱՄՆ-ում 20 հատորով լույս տեսած աշխատությունը Ա. Գորկու ստեղծագործության մասին: Հայերեն և անգլերեն զուգահեռ տեքստերով Երևանում տպագրվել են Գորկու նամակները,

առաջաբանը գրել է արվեստաբան Շ.Խաչատրյանը: Վերջինս մեզանում տպագրել է նաև մի այլ գիրք Ա.Գորկու մասին /հայերեն, անգլերեն/, մի շարք նկարների վերատպությամբ [4]: Ուշագրավ է Վ.Ղազարյանի նրա մասին հոդվածը «Հայոց ցեղասպանություն-100» ժողովածուում [6, էջեր 606-612]: Խորհրդային տարիներին տպագրվել և բեմադրվել է Ա. Պետրոսյանի Ա.Գորկու մասին «Երկար վերադարձ» վերնագրով պիեսը [7]: Սփյուռքահայ ճանաչված գրող Ս.Վահագնի մասին հիշատակումներ կատարել են սփյուռքահայ գրականության պատմությանը նվիրված իրենց հայտնի աշխատություններում Գ.Սևանը, Վ.Գաբրիելյանը: Իսկ ահա արձակագրի «Արշիլ Գորքի» վեպի գնահատությանը քչերն են անդրադարձել: Այդ քչերի մեջ առաջին անգամ այս վեպի մասին ծավալուն գրել և 2016 թ.ուշագրավ մագիստրոսական թեզ է պաշտպանել Երևանի Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ուսանող Լ. Սարգսյանը: Աշխատանքն աչքի է ընկնում Ս.Վահագնի կենսագրության ու ստեղծագործության մասին հարուստ տեղեկություններով և վեպի հետ կապված որոշ թեմաների էական բացահայտումներով: /Այն չի տպագրվել. թեզի էլեկտրոնային տարբերակը ինձ է տրամադրել Սարգիս Վահագնը – Գ. Խ. /:

2017 թ. Երևանում լույս տեսնող «Ազգ» թերթի համարներից մեկում տպագրվում է այս տողերի հեղինակի «Կենսագրական վեպ ամերիկահայ նշանավոր գեղանկարիչ Արշիլ Գորկու մասին» հոդվածը [5, էջ Գ-Դ]: Այն դրվատական արձագանքի է արժանացել Լուս Անջելեսում բնակվող վեպի հեղինակի կողմից: /«Այդպիսի հոդված իմ վեպի մասին Ամերիկայում չի տպագրվել», - ասել է նա ինձ հետ հեռախոսազրույցի ժամանակ -Գ. Խ. /:

Վեպի մասին ուշագրավ դիտարկումներով առանձնանում է սփյուռքահայ հայտնի մտավորական, գրականագետ Ե. Ազատյանի «Արշիլ Գորքիի» վիպական կեանքը» հոդվածը, որը կրճատված «Սարգիս Վահագնի «Արշիլ Գորկի» վեպը» վերնագրով գետեղվել է վեպի երևանյան վերահրատարակության մեջ իբրև առաջաբան [1, էջեր 3-5]: Այս հրատարակությունը վեպի արևմտահայերենից գրական արևելահայերենի փոխադրված տարբերակն է, ինչը վկայում է վեպի՝ արևելահայ ընթերցողների կողմից պահանջված լինելու մասին:

Մեր այս նոր հոդվածում վեպի վերլուծությանն ու հատկապես գլխավոր կերպարի՝ իբրև պրոտագոնիստ հերոսի պատկերմանն անդրադարձել ենք գրականագիտական **մեթոդներից** ընտրելով այնպիսիք, որոնք գրականությունն այս կամ այն չափով դիտարկում են իբրև հասարակական կյանքի, մարդու արտացոլում, նրան հետաքրքրող սոցիալ-հոգեբանական, փիլիսոփայական, գեղագիտական հայեցակետերից: Մեր **նպատակն** է գլխավոր հերոսի՝ ամերիկահայ նշանավոր գեղանկարիչ Արշիլ Գորկու, իր իսկական անուն-ազգանունով՝ Ոստանիկ Ադոյանի կերպարի միջոցով բացահայտել սփյուռքում հայտնված հայ մարդու կյանքի էպիկական ելևէջները, նշանավոր արվեստագետի ներաշխարհում խմորվող ազգային ու համամարդկային աշխարհընկալումների, բարոյական ու գեղագիտական պատկերացումների յուրօրինակ համադրումները, որոնք ուրույն կերպով են դրսևորվում նրա գեղանկարչական ստեղծագործություններում, բացահայտվում ավանդական ու նրա դավանած վերացական-արտահայտչա-

կանության կամ միջազգային տերմինով՝ աբստրակտ-էքսպրեսիոնիզմի գեղարվեստական հնարքների միջոցով: Այսպիսի նպատակին հասնելու համար մեր **խնդիրն էնք** համարել վեպի ձևաբովանդակային բաղադրիչների տիրույթում դիտարկել գլխավոր հերոսի կենսադրվագների, հոգեկերտվածքի ու ստեղծագործական զարգացման ելևէջները, որոնք նրան տանում էին դեպի մի կողմից մշակույթի /գեղանկարչության/ համաշխարհայնացում ու միաժամանակ վերադարձում /կամ այն համադրում/ ազգային կյանքի ու մշակույթի հոգեհարազատ արժեքներին:

Թեման **արդիական է** նրանով, որ կենսագրական վեպի վերլուծության տիրույթում դատապարտվում է 1915 թ. Թուրքիայում երիտթուրքերի իշխանությունների կողմից պետականորեն կազմակերպված արևմտահայության Ցեղասպանությունը, որի հետևանքով էլ տեղի է ունենում ողջ մնացած հայության գաղթը աշխարհի տարբեր երկրներ, այդ թվում՝ հեռավոր ԱՄՆ: Ցեղասպանությունն ու դրա հետևանքները եղան հայ մարդու՝ արմենոիդ մարդաբանական տեսակի փորձության մի նոր փուլ, որի արդյունքներից մեկը հայկական Մփյուռքի և սփյուռքահայ գրականության առաջացումն էր, այդ թվում՝ Ս. Վահագնի «Արշիլ Գորքի» կենսագրական վեպի ստեղծումը: Վերջինս իր հերթին միտված էր գլխավոր հերոսի մեջ բացահայտելու հայ մարդու, մարդաբանական այդ ուրույն տեսակին պատկանող ներկայացուցչի մեջ ստեղծագործական բարձր ընդունակությունների դրսևորումները, դրանով իսկ՝ հայ մարդուն օտարներին այս տեսանկյունից ևս ճանաչելի դարձնելու նպատակին:

Նման գերխնդրի լուծմանը գրողը հասել է նաև իր նախասիրած գրական մեթոդի՝ նորովի ըմբռնված ռեալիզմի որոշակի սկզբունքներով առաջնորդվելու շնորհիվ: Միացյալ Նահանգների իրականությունը և մասնավորապես իր վեպի գլխավոր հերոսին գեղարվեստորեն մարմնավորելու համար հեղինակը հենվում էր աշխարհը իրատեսորեն հետազոտելու և կենսական ճշմարտությունը պատկերելու հանդեպ իր հակումների վրա: Նորովի ըմբռնված ռեալիզմը ներառում է համաշխարհային մշակույթի նախորդ զարգացած շերտերի /անտիկ, միջնադարյան, Վերածննդի/, այլ գրական ուղղությունների /ռոմանտիզմ, սիմվոլիզմ, նատուրալիզմ, մոդեռնիզմ/ իր զանազան հոսանքներով և այլն/ ձեռքբերումները: Սփյուռքահայ գրողի այս վեպում կարևորվում է գոյապաշտության /էկզիստենցիալիզմ/ փիլիսոփայության և գրական փորձի նշանակությունը, ինչպես նաև վեպի հերոսին վերհուշերի մեջ պատկերելիս «գիտակցության հոսքի» հնարքն օգտագործել իբրև «գեղարվեստական տարածք ստեղծելու միջոց» [9, էջ 775]: Արտասահմանյան գրականության ճանաչված մասնագետ պրոֆեսոր Բ.Ա. Գիլենսոնը գրում է. «Ժամանակակից փուլում ռեալիզմը հարստանում է նորագույն գեղարվեստական միջոցների բազմազան գույների զինանոցից, այդ թվում՝ նաև այն գրողների, որոնց գրականագետները համարում են մոդեռնիզմի կամ պոստմոդեռնիզմի ներկայացուցիչներ» [10, էջ 12]: Այս ամենով հանդերձ՝ ասենք, որ վեպի հեղինակը իր ուշադրությունը սևեռել է հատկապես գեղանկարիչ Արշիլ Գորկու ինքնատիպ գեղանկարչական կտավներում ազգային ու համաշխարհային արվեստի համադրումներով դրսևորված առանձնահատկությունների ու հերոսի ներաշխարհի բացահայտումների վրա: Ս.Վահագնը իր կիրառած գեղարվեստական սկզբունքների կապակցությամբ այսպիսի շեշ-

տաղրում է կատարել վեպի «Նախաբանում»՝ գրելով. «...Եղելութիւնները, դէպքերը, ժամանակն ու միջավայրը, ինչպէս նաեւ Գորքիին հետ առնչուող եւ անոր շուրջը գործող տիպարները, թէեւ սեւեռոված են, մեծ մասամբ, իրականութեան համապատասխանող հաւատարմութեամբ, նոյնիսկ անփոփոխ պահելով անձնատուններն ու տեղանունները, բայց բնաւ չեն յաւակնիր ըլլալու տառացիորէն ճշգրիտ եւ մանրամասն կենսագրական ուսումնասիրութիւն մը» [8, էջ 7]:

ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹՅՈՒՆ. 1915 թ. արևմտահայության ցեղասպանության ու դրա դրամատիկ ու ողբերգական հետևանքների բեռը կրող Սփյուռքում հայտնված հայ մարդու մեջ մարդկային ու ազգային բնավորության տարբեր դրսևորումների գեղարվեստական արտահայտությունը սփյուռքահայ գրականության մեջ նպաստում են տեսնելու և ճանաչելու հայ մարդու էության նաև այնպիսի կողմերը, որոնք կրում էին աշխարհի տարբեր երկրների հասարակական, մշակութային, կենցաղային բարքերի ազդեցությունը: «Սփյուռքահայ գրականութեան շնորհիւ մենք մեզ սկսում ենք աւելի լավ ճանաչել» [3, էջ 3],- գրել է գրականագետ Ս. Դանիելյանը: Մեջբերված միտքն իրեն արդարացնում է նաև Ս. Վահագնի կենսագրական վեպի ու նրա գլխավոր հերոսի շնորհիվ: Հեղինակի համար կարևորագույն խնդիր է եղել իր հերոսի կերպարում, հոգեբանության, ստեղծագործական նախասիրությունների առնչություններում բացահայտել նրա հայկականության դրսևորումները: Վեպի հեղինակը գիտակցաբար կամ ենթագիտակցորեն իր երկն ստեղծել է կենսագրական վեպերին բնորոշ սկզբունքների օգտագործմամբ: Խոսքը մասնավորապես վերաբերում է նման երկերում վավերականի և գեղարվեստականի համադրումներին, հոգեբանական վեպի հետ ունեցած մերձավորությանը: Վեպում Ա. Գորկու կենսագրությունը հանգամանորեն ներկայացված չէ, այն նկարչի վավերական կենսագրության համայնապատկերի վրա գործված գեղարվեստական ստեղծագործություն է, որի կենտրոնում գլխավոր հերոսի կերպարն է: Նշանավոր անհատի ճակատագրի միջոցով սփյուռքահայ գրողը Ա. Գորկուն պատկերում է ԱՄՆ-ի, մասնավորապես՝ Նյու Յորքի գեղանկարչական արվեստի ներկայացուցիչների միջավայրում: Այստեղ նա ներկայանում է արվեստագետի իր ներքին էությունը ու հայ երիտասարդին բնորոշ նախասիրություններով, կորցրած հայրենիքի մասին հուշերով: Նրա համար թանկ արժեքներ են ազգային ավանդույթները, հայի հոգեկերտվածքի դրսևորումները, բարոյական պատկերացումները, որոնք յուրովի համադրվում են ամերիկյան բարքերի, նկարիչների բռնեմական միջավայրի նիստուկացին: Հեղինակը, ակներևորեն ձեռքի տակ ունենալով Ա. Գորկու պահպանված և տպագրված նամակները, որոշ ուսումնասիրություններ նրա գեղանկարչության մասին, հարազատների ու նրան լավածանոթ նկարիչների հուշերը և այլն, ստեղծել է հավանական ու հնարավոր մի իրապատում հյուսվածք սփյուռքում հայտնված հայ նկարչի ծանր ճակատագրի, գեղանկարչական արվեստում կատարած որոնումների ու արարումների վերաբերյալ:

Արձակագրի ստեղծած գեղարվեստական կառույցում ընդունված խաղի կանոններն ավելի շատ համընկնում են ռեալիստական ռճամտածողության սկզբունքներին: Իրատեսականորեն և հայոց Ցեղասպանության դիպուկ դատապարտությամբ է ներկայացված նաև արվեստագետի ծածկանունը ռուս նշանավոր գրող Մաքսիմ Գոր-

կու անվան հետ կապելու և իրեն նրա զարմիկ լինելու հորինվածքը, ինչպես նաև Եվրոպայում Վ. Կանդինսկուն աշակերտելու մասին պատմությունը: Նկատենք, որ վեպի գեղարվեստական տիրույթում նկարագրվում է նաև Ա. Գորկու և Վ. Սարոյանի հանդիպման մի դրվագը, ուր նշանավոր գրողը նրան ևս հեզնանքով դատապարտում է օտար անուններով ծածկանուն ունենալու համար:

Այդ հորինված պատմությունների հեղինակային ծանրակշիռ հիմնավորումը միահյուսվում է հերոսի մտորումների հետ, ուր ընդգծվում է այն իրողությունը, որ օտար միջավայրում նաև այդ կերպ հարմարվելու և ինքնահաստատվելու համար նա չի երկնչել նման պատմություններ հորինելուց: Չէ՞ որ այդ վիճակում նա հայտնվել էր իր հայրենիքում, թուրք եղեռնագործների իրականացրած արևմտահայության Ցեղասպանության հետևանքով, մինչդեռ մեծ տերությունները ըստ արժանվույն չդատապարտեցին հանցագործ երկրի իշխանություններին: Ինքը մոր շնորհիվ քույրերի հետ մի կերպ կարողացավ փախչել դժոխքից և հայտնվել Արևելյան Հայաստանի տարածքում՝ Էջմիածնում, Երևանում: Հեղինակի նպատակն է եղել ընդգծված կերպով ցույց տալ, որ նկարիչը թեև օտար անունով էր հանդես գալիս, սակայն իր ներքին էությունը ու աշխարհընկալումներով ոչ միայն չէր հեռացել ազգայինից, այլև ավելին, նկարելիս սիրում էր լսել ազգային երաժշտություն, արտասանել հայ բանաստեղծների երկերից: Ա. Գորկին անվան հետ կապված անմեղ հորինվածքներով ձգտում էր ամեն կերպ ինքնահաստատվել Նյու Յորքի, ապա ԱՄՆ-ի արվեստագետների միջավայրում, ինչին նա ի վերջո հասնում է, ինչ խոսք, ոչ թե իր անվան, այլ ինքնատիպ տաղանդի և նկարելու անժխտելի բարձրակարգ ընդունակության շնորհիվ:

Հրաշքով ողջ մնացած հայ գեղանկարչի ճակատագիրը վեպում պատկերված է ԱՄՆ-ում 1920-ական թթ. մինչև 1940-ական թթ.: Սա կենսագրական վեպի հեղինակային այն տարբերակն է, ուր գլխավոր հերոսի մանկությունը ներկայանում է ընթերցողին նրա վերհուշերի միջոցով, իսկ կերպարի ներքին ապրումների ու մտորումների շնորհիվ զգացվում է հոգեբանական վեպի և համաշխարհային գրականության մեջ գիտակցության հոսքի գեղարվեստական փորձի յուրացումները: Բացի այս՝ վեպի ողջ տիրույթում հեղինակը Ա. Գորկուն ներկայացնում է՝ ազգային-մշակութային արժեքների հետ կապը պահպանելով հայեցի ապրելու գոյապաշտական ներքին մղումների տիրույթում, ինչը դրսևորվում է նույնիսկ գեղանկարչության մեջ նորարարական արվեստի՝ վերացական-արտահայտչապաշտության ու պյուրռեալիզմի ասպարեզում, ուր անվերապահորեն հասնում է միջազգային ճանաչման: Իր նամակներից մեկում Գորկին շատ է արժևորում հայ միջնադարյան մանրանկարչության նշանավոր ներկայացուցիչներ Թորոս Ռոսլինին և Սարգիս Պիծակին: Վկայակոչենք նաև արվեստաբան Ռոբերտ Ջնասի ուշագրավ հետևյալ դիտարկումը Ա. Գորկու հայկական ազգային մշակույթի հետ ունեցած սերտ առնչության մասին. «Գորկու հարուստ հայկական անցյալը սրում էր նրա գիտակցությունը: Դուք ամեն պահ զգում էիք, որ նա երբեք այստեղ չէ, որ նրա անցյալի ցավը երբեք չի անցել: Գորկու գործերն ունեն հայկական ջերմություն և պարային որակ: Գորկին էր առաջինը, որ իր բանաստեղծական երևակայությամբ վերջ տվեց կուրիզմին... նա կրքոտ սեր ուներ անցյալի հանդեպ» [6, էջեր 606-612]: Նկատենք նաև, որ վե-

պը գրելու շարժառիթը հեղինակի համար եղել է ֆրանսիական «Էքսպրես» շաբաթաթերթի մի հոդվածում Ա. Գորկուն հրեա համարելու հանգամանքը: Ուստի Ս. Վահագնի համար Ա. Գորկու հայկականությունը մատնանշելու միտումը վեպի գեղարվեստական տիրույթում դառնում է գերխնդիր:

Կենսագրական վեպում այուժեի զարգացումը սովորաբար պետք է նպաստի ֆաբուլայի, այս դեպքում՝ գլխավոր հերոսի կենսագրական դրվագների գեղարվեստական պատկերմանը: Կարող ենք ասել, որ Ս. Վահագնը գրական վարպետությամբ է այդ երկուսը ներկայացրել գեղարվեստական ուրույն համադրություններով: Դրան նպաստում է հերոսի վերհուշերին դիմելու հնարքը, ինչն իրականացվում է նրբամտորեն, տեղին՝ դարձնելով գեղարվեստական պատկերման անհրաժեշտ բաղադրիչ: Իսկ որ ավելի կարևոր է, այն գլխավոր հերոսի ներաշխարհը բացահայտելու գեղարվեստական եղանակ է, ուր նկարչի հուշերի մեջ, Ա. Գորկին ամենից շատ է ներկայանում իր հայկական արմատներով, հայրենիքի, ծննդավայրի Խորզոմ գյուղի, Վանի տարածաշրջանի բնության, գույների ու բույրերի, ինչպես նաև ազգագրական մանրամասների գուներանգների հետ: Ապագա նկարչի հատկապես մանկության և պատանեկության շրջանը գրողը ներկայացնում է արդեն հասուն տարիքում Ա. Գորկու վերհուշերի, գիտակցության հոսքի հետ հյուսված ներքին մենախոսության միջոցով:

Վեպի նախադրության մեջ Ա. Գորկին ներկայանում է իր ամենանշանավոր ստեղծագործության՝ «Նկարիչը և մայրը» կտավի ստեղծման ուղղությամբ հայտնված ներքին ապրումների, մոր մասին սրտակեղեք վերհուշերի մեջ: Իսկ դրանց միջոցով ընթերցողը ծանոթանում է ոչ միայն մոր հանդեպ բացառիկ որդիական սիրո դրսևորմանը, այլև բացահայտվում է այն դրամատիկ ու ողբերգական իրողությունների դաշտը, ուր հայտնվել էր Ոստանիկը իր մանկության ու պատանեկության շրջանում, երբ հայրը՝ Ս. Ադոյանը, դեռևս Վանի մոտ Խորզոմ գյուղում ապրելիս 1908 թ. լքել էր նրանց և գնացել ԱՄՆ, հետագայում ամուսնացել ուրիշ կնոջ հետ: Նկարչի մայրը՝ Շուշանիկը, դիմացել էր փորձություններին նաև այն ժամանակ, երբ 1915 թ. կոտորածների շրջանում իր երեք դուստրերին և որդուն, տիրություն անելով, կարողացել էր անցնել սարսափներով լի ճանապարհ և հանգրվանել Էջմիածնում, այնուհետև՝ Երևանում: Տիկին Շուշանիկը թերսնման հետևանքով մահանում է որդու ձեռքերի վրա: Նրա դիակը մյուսների հետ թաղում են անհայտ մի վայրում: Անգերեզման մնացած մոր հիշատակը շարունակ մորմոքում էր հայ երիտասարդ նկարչի հոգին, և վերջինս ցանկանում է նրա հիշատակը յուրովի անմահացնել՝ ստեղծելով նրա գեղանկարչական կերպարը:

Այսպիսով վեպի հիմնախնդիրներից մեկն ահա դարձել է ԱՄՆ-ում հայտնված Ա. Գորկու անցյալի, հայրենիքի, հարազատների հանդեպ և հատկապես սովամահ եղած ու գերեզման անգամ չունեցող մոր մասին վերհուշի մտասնեռումները: Նյու Յորքը ԱՄՆ-ում մշակութային կենտրոն էր դարձել, այստեղ ապրող նկարիչը, այնուամենայնիվ, շարունակ իրեն կապված էր զգում ազգային հիշատակների ու մոր նկատմամբ հոգին շարունակ անհանգիստ պահող երախտագիտության զգացումների հետ: Եվ հոգու տվայտանքներից ազատվելու ելքն ի վերջո գտնվում է: Նա Ազգայի քրոջ տանը հայտնաբերում է իր և մոր լուսանկարը: Նրանք լուսանկարվել էին Վանում, որպեսզի ԱՄՆ

ստեղծագործական հորն ուղարկելին: Լուսանկարը դառնում է յուրօրինակ հայտնագործություն, որի հիման վրա նա ստեղծում է իր հանրահայտ գեղանկարը «Նկարիչը և մայրը» վերնագրով: Նա դիմանկարներ գծանկարելու մեջ վարժվել էր, նույնիսկ Բոստոնի կինոդահլիճներից մեկում, հինգ վայրկյանում ԱՄՆ-ի հինգ նախագահների նկարները գծանկարելով, հինգական դուլար էր վաստակել: Իսկ ահա մոր դիմանկարը ստեղծելը հոգեբանական ու ստեղծագործական շատ ավելի բարդ խնդիր լուծելու առաջ էր կանգնեցրել նրան: «Ինք կ'ուզեր, որ մօրը նկարը խորք ու ձեւի միաձույլ ամբողջություն մը ըլլար, ուր համադրուէին գոյն, գիծ, կառոյց, կշռոյթ, ծաւալ ու սլացք: Եւ այս բոլորը, պարզ ու մատչելի՝ բոլորին: Եւ որ սակայն անոնք չդադրէին խոր արտահայտչականութեամբ խորհրդանշել մօրը էութիւնը, անոր հոգեկան հորիզոնը, կեանքը, գրկանքներն ու տառապանքը, յոյսերն ու երագները, լացն ու ժպիտը, հայութիւնն ու մարդկայնութիւնը: Մէկ նկարի մէջ այդպիսի բարդ տիեզերք խտացնել, յաւակնութիւն մըն էր, որուն մատչիլ կ'ուզէր անպայման, որովհետս համոզուած էր, թէ կատարելութեամբ միայն արժանատրապէս պիտի կարողանար վերակենդանացնել մայրը» [8, էջ 12]: Հեղինակը տպավորիչ իրավիճակում է ներկայացնում «Նկարիչն ու իր մայրը» հանրահայտ նկարի՝ Ա. Գորկու գլուխգործոցներից մեկի ստեղծման ընթացքի ողջ բարդությունն ու ներքին դրամատիզմը: Այս նկարի վրա նա աշխատել է երկար տարիներ և հատկապես 1926-42 թթ. ստեղծել է տարբերակներ, փորձել է նկարել տարբեր գեղանկարչական ուղղություններին բնորոշ ոճերով: Նկարելու սկզբունքի երկրնտրանքը վկայում է Ա. Գորկու համար դրանց և՛ մատչելիության, և՛ այդքանով չբավարարվելու, ուրույն, ինքնատիպ մոտեցում հանդես բերելու նրա ձգտումների մասին:

«Նկարիչն ու իր մայրը» նկարը մեկնաբանողները զուգահեռներ են անցկացրել դրա և Վերածնության դարաշրջանի իտալացի նշանավոր նկարիչ Ռաֆայելի «Միքստինյան Տիրամայր» /1515-1519 թթ./ նկարի միջև: Վեպում նման համեմատություն է անցկացնում Գերընը՝ Գորկու սիրած աղջիկը, որը նրա մոտ նկարել էր սովորում: Գորկին հաստատում է նրա ասածը՝ հավելելով, որ. «միայն՝ մատոնան հայ է, մա՛յրս, եւ որդին ալ ե՛ս եմ» [8, էջ 26]: Իսկ արվեստաբան Շ. Խաչատրյանը գրում է. «Լուսանկարի հիման վրա ստեղծված «Նկարիչն ու իր մայրը» հանճարեղ կտավն ակամա հիշեցնում է Ռաֆայելի «Միքստինյան Տիրամայրը»: Ռաֆայելի Տիրամայրը, աչքերում տազնապ, աշխարհին է նվիրաբերում որդուն: Իսկ այստեղ՝ Ոստանիկ-Գորկի որդին աշխարհին է ներկայացնում իր կորուսյալ մորը, որպես կորսված հայրենիքի ու նրա գեղեցկության խորհրդանիշ» [4, էջ 15]: Կարելի է ավելացնել նաև, որ գրողը մոր նկարի մեկնաբանման մեջ ավելացրել է կեցության գոյաբանական իր ընկալման այլ երանգներ ու մտահոգություն ևս, լիարժեք դարձնելու համար մոր ազգային ու անհատական դառն ու դաժան ճակատագիրն ու իր զավակներին կոտորածներից փրկելու համար գործադրած անմնացորդ նվիրվածությունն ու հոգու անմեղությունը. «Հպանք մը կարմիր խառնեց, կասկած մը սեւ ու դեղին՝ ու յոնքերը կամարուեցան բերանին վրայ: Ապա մորը աչքերը, աշխարհի եւ մարդոց մրափող խղճին դիմաց բացուեցան զարմացումով, եւ անմեղութեամբ, իրենց սեւ մաքրութեան մէջ ծաւալեցին սպիտակ թախիժը սուրբ» [8, էջ 15]: Երբ հետագայում նկարում պատկերված մոր աչքերի յուրահատուկ արտահայտության կա-

պակցությամբ օտարազգի նկարիչների կողմից ասվել է, որ նա Պ. Պիկասոյի և այլ ազդեցությունների ներքո է գտնվել, այդ առնչությամբ քրոջը գրած նամակում նշել է. «Մայրիկի հայկական աչքերը նրանք անվանում են պիկասոյական, հայկական տխրությունը՝ բյուզանդական ու ռուսական: Եվ եթե ես ուղղում եմ նրանց ու ասում. «Ոչ, սիրելի պարոնս, դուք սխալվում եք, դրանք հայկական աչքեր են, ապա տարօրինակ ձևով վրաս են նայում ու ասում, որ դա պարզապես «փոքր ազգի շովինիզմի» չափազանցություն է: Պատկերացնում ես, եթե ուղղես նրանց, ապա դատապարտվում ես նրանց կողմից: Մեր աչքերը: Մեր հայկական աչքերը ավելի շատ են խոսում, քան շուրթերը...» [2, էջ 98]: «Նկարիչն ու իր մայրը» նկարի կապակցությամբ ավելացնենք հետևյալը, որ այստեղ գիտակցաբար թե ենթագիտակցորեն նկարիչը արտահայտել է նաև մոր և մանկան /որբի/ արքետիպային էության մասին իր պատկերացումների կերպարային տարբերակները: Եթե մայրը /ըստ Կ. Յունզի/ խորհրդանշում է թե՛ իրական մորը և թե՛ մայր երկիրը և փոխաբերական իմաստով մայրության մասին պատկերացումները, ապա պատանի Ոստանիկը նկարում որբ որդին էր, որը հետագայում հայտնվել էր օտար միջավայրի մեջ՝ ինքնահաստատվելու բարդ իրողությունների առջև իր վարանոտ տեսքով, ապագայի անորոշության հանդեպ դեռևս հենված մոր բարոյական ուժի ինտերցիայի վրա:

Հեղինակն իսկապես իրատեսական մոտեցմամբ է ներկայացնում ԱՄՆ-ում Ա. Գորկու դեմ ծառայած իրական դժվարությունները հաղթահարելու ջանքերը: Այդ ամենի միջով անցնելու համար, անշուշտ, անհրաժեշտ էր օժտված լինել ուժեղ կամքով, նպատակին հասնելու անսպառ եռանդով, գեղանկարչության մեջ նոր գեղարվեստական պատկերավորման միջոցների կիրառմամբ հանդես գալու հետևողականությամբ: Այդ ամենով հանդերձ՝ իր կայուն մտասևեռումը հայրենիքի՝ Վանի, ծննդավայր Խորզում գյուղի, բնաշխարհի գույների ու ձևերի, իր ընտանեկան ու անհատական դառը ճակատագրի տպավորություններն են: Ուշագրավ է այս առումով հոր կոշիկի հետ կապված պատմությունը, որի հետևանքով արդեն վերացական-արտահայտչապաշտության սկզբունքներով նկարող Գորկին հաճախ է օգտագործում իր նկարներում, յուրովի անդրադառնալով տնից հարազատի անվերադարձ հեռանալու գաղափար-հուշին, որը ուղեկցել էր նրան տարիներ շարունակ: Բայց և այնպես նկարիչը կենսասեր է, նա հայ բանաստեղծների /Թումանյան, Իսահակյան, Տերյան/ ստեղծագործությունների՝ քրոջ և իր արտասանությամբ, Կոմիտասի, հայ ժողովրդական երգերի կատարումներն ունկնդրելով է ուղեկցում հերթական նկարի արարումը: Նման պահերին տեղի է ունենում գրողի կողմից պատկերված հերոսի ներաշխարհի դրսևորում գիտակցության հոսքի միջոցով իբրև գեղարվեստական միջավայր ստեղծելու հնարք: Նկարիչը իր նկարի արարման պահին պարզապես իրեն պատկերացնում է ազգային կյանքի ու մշակույթի, գեղարվեստական խոսքի մթնոլորտում և ինտուիտիվ, վերացարկումներ պարունակող պատկերներով հաստատված կապի մեջ: Այդպիսին են, օրինակ՝ «Գութանը և երգը» «Պարտեզ Խորզումում» նկարների արարման ու մեկնաբանության դրվագները: Այստեղ էլ նկատենք, որ ազգային կյանքի ու բնության տեսարաններն ամերիկյան արվեստագետներին նույնիսկ արստրակտ ոճով ներկայացնելու ձգտումը ևս փորձության է են-

թարկում նրան: Նյու Յորքում իր նկարներով ցուցահանդեսին մասնակցելու համար հարկադրված է լինում Ամերիկյան արվեստի Ուիթնի թանգարանի տնօրեն Լ. Կուդրիչի ցանկությամբ համաձայնվել, որ «Պարտեզ Խորզումում» նկարը անվանվի «Պարտեզ Սոչիում», քանի որ Սոչին ավելի հանրահայտ տեղանուն էր:

Այնուամենայնիվ, Գորկու մասին գրողները հաճախ են շեշտել նրա մեջ հայրենիքի նկատմամբ դրսևորվող կարոտի խոր զգացումը: Ս.Վահագնը նկարչի հոգում կարոտաբաղձության դրսևորումները ներկայացրել է գեղարվեստական կոնկրետությամբ, հոգեբանական ու ստեղծագործական մտահղացումները նկարագրելիս ու ներքին ապրումներն արտահայտելիս: Հայրենիքի, մանկության հեռավոր Վանի ու նրա մերձակայքում՝ Վանա լճի ափին գտնվող ծննդավայր Խորզում գյուղի, հարազատների մասին հիշողությունները, ազգային գեղանկարչական արվեստի, միջնադարյան հայ նշանավոր մանրանկարիչների՝ Ռոսլինի, Պիծակի արվեստին տված նրա բարձր գնահատությունը թերևս դառնում են այն հոգևոր, նաև գունային, գեղանկարչական պատկերացումների լայն ու խոր ակունքը, որ նրան մղում են կապված մնալու իրեն հարազատ միջավայրի ու գուներանգների հետ: Իհարկե, դրանք նա յուրովի համադրում էր եվրոպական գեղանկարչության ասպարեզում ձեռքբերումներին, արարում նոր, ինքնատիպ մտահղացումներով:

Ս. Վահագնը վեպում հաճույքով է կարևորել 1940-ական թթ. Ֆրանսիայում ֆաշիստներից խույս տված և Նյու Յորքում հանգրվանած ֆրանսիացի նշանավոր մոդեռնիստ արվեստագետների, Եվրոպայում սյուրռեալիզմի գրականության նշանավոր հիմնադիր Անդրե Բրետոնի /1896-1966թթ./ հետ հանդիպումները: Վերջինիս հետ մտերմությունը պայմանավորված էր Ա.Գորկու նկարներին տված բարձր գնահատանքով, դրանց խորհրդանշական, անսովոր, զարմանալի վերացարկված գունաձևային գեղանկարչական պատկերների բնույթով, կյանքի, ազատության խորքային զգացումների, ընդհանրապես ինքնատիպ գեղարվեստական մտածողության գունագծային, պատկերային ոչ ավանդական, սովորական արտահայտություններով: Ա. Բրետոնը նույնիսկ նկարչի համաձայնությամբ ինքն է վերնագրում մի շարք նկարներ, գրում է անհատական ցուցահանդեսի բրոշյուրի /բուկլետ/ ներածական խոսքը: Ուշագրավ է նաև այն, որ Գորկին թեև չէր ընդունում սյուրռեալիստների՝ զգացումների թելադրանքով ուղղակիորեն ստեղծագործելու սկզբունքը, բայց և այնպես միջազգային ճանաչում ձեռք բերած Ա. Բրետոնի կողմից հավանության արժանանալը նա կարևորում էր:

Այս կենսագրական վեպի գրավչության նախապայմաններից են նաև հեղինակի հստակատեսության դրսևորումները, ամերիկյան բարքերը իրատեսորեն պատկերելու նախասիրությունը: Ամերիկյան կենցաղի համապատկերում բնորոշ գծերով են ներկայացված արվեստի հետ տարբեր առնչություններ ունեցող այն մարդիկ, որոնք շփվում են գլխավոր կերպարի և նրա կնոջ՝ Ազնես Մակրուտերի հետ և հանդես են գալիս դրվագային, սակայն կարևոր դերակատարմամբ:

Իր արժանավոր դերակատարությունն ունի նաև Ա. Գորկու աբստրակտ-արտահայտչապաշտական ոճի գեղանկարչական գործերը մեկնաբանելու հեղինակի գեղագիտական ճաշակն ու խորաթափանցությունը. այն նպաստում է, որ Ա. Գորկու

ստեղծագործությունների բովանդակությունն ընթերցվի ու մեկնաբանվի նկարչի հոգուն ու ճակատագրին համահունչ իմաստներով: Չէ՞ որ 20-րդ դարասկզբի ավանգարդիստական ուղղություններին պատկանող նկարիչների նկարները ենթարկվում են բավականին բազմազան տարընթերցումների: Իսկ մասնավորապես «Նկարիչ-էքսպրեսիոնիստները ստեղծում էին ընդհանրացված այլաբանություններ» [11, էջ 483]: Ս.Վահագնը Ա.Գորկու նկարներում տեսնում է ն՛ համամարդկայինի, ն՛ ազգայինի ու անձնական-անհատականի համադրումներ: Նման մոտեցումներով մեկնաբանությունները կարող են նպաստել ընթերցողին ճիշտ հասկանալու ամերիկյան գեղանկարչության մեջ վերացական-արտահայտչապաշտության մեջ առաջնորդ դիտված Ա.Գորկու ստեղծագործությունների բովանդակությունը, դրանց պատճառահետևանքային առնչությունները գրողի հետաքրքրությունների ոլորտի հետ: Արձակագրի նման մոտեցումը ավելի տեսանելի է դարձնում նկարչի խորհրդանշական գունաձևային պատկերների իրական, կյանքային հիմքերը: Ս.Վահագնի կողմից Ա.Գորկու նկարների ներհուն մեկնաբանությունները, կարծում ենք, մեծացնում են նրա կենսագրական վեպի ճանաչողական նշանակությունը: Դրան նպաստում է նաև Գորկու ազգային նկարագրի, հայկականության ու ամերիկյան միջավայրի բարքերի որոշակի հակադրության ու այդ միջավայրում ինքնահաստատման բարդություններին դիմակայելու բացահայտումները: Կանանց հանդեպ սիրո և այլ հարաբերությունների պատկերմամբ ավելի է կոնկրետանում նկարչի բարոյահոգեբանական նկարագիրը: Հատկապես համոզիչ, լիարյուն և դրամատիզմով հարուստ նրբերանգներով են արտահայտված նրա սերն ու նվիրվածությունը Ազնեսի նկատմամբ, ոգևորությունը դուստրերի՝ Մարոյի, Նատաշայի լույս աշխարհ գալու կապակցությամբ:

Կենսագրական վեպում դիպաշարը ընդհանուր առմամբ բնականաբար համընկնում է ֆաբուլային, այսինքն՝ հերոսի կյանքի հիմնական դրվագներին: Ըստ այդմ էլ նկարչի կյանքի դրամատիկ ու ողբերգական ավարտը վեպի վերջին դրվագն է դարձել: Այդ իրադարձություններից թերևս կարելի է այսպիսի հետևություն անել: Ա. Գորկի-Ուստանիկ Ադոյանի արդեն միջազգային ճանաչման արժանացած նկարչի դժբախտությունը ոչ թե լուր տարագիր հայի ճակատագիրն էր, որը որոշակի դերակատարություն ունեցավ նրա կենսուղու ելևէջումներում, այլև քաղցկեղի պատճառով կատարված ծանր վիրահատությունը, ավտովթարը, որը զրկեց նրան նկարելու հնարավորությունից, և հատկապես կնոջ անհավատարմությունը, երբ վերջինս նրան լքեց՝ այդ վիճակում թողնելով միայնակ: Ա.Գորկին տարագրության մեջ միշտ հույսը կապել էր իր առողջության ու ֆիզիկական կարողությունների հետ: Դրանք կորցնելու հետևանքով նա զրկվել էր նաև իր կյանքի իմաստը հանդիսացող նկարելու հնարավորությունից, իսկ ուրիշ կերպ նա չէր կարող ապրել: Ուստի, այս դեպքում կարելի է ասել՝ ուժեղ կամք դրսևորելով՝ մեծ արվեստագետը ինքնասպանության դիմեց: Մինչ վճռական քայլը կատարելը նա, հոգու մեջ կուտակված դառնությունը հետ մղելով, գրեց այսպիսի հրաժեշտի խոսք. «Մնա՛ք բարով, սիրելիներ՛ք», ու վճռական հարածեց ոտքերուն տակ տեղաւորած սնտուկը» [8, էջ 272]: Այսպես հանդես բերելով մեծ անհատականությանը վայել

մեծահոգություն՝ մի վերջին անգամ բացահայտելով ներաշխարհում ապրող սերն ու բարյացակամությունը իր համար սիրելի մարդկանց հանդեպ:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. 1. Հոդվածում մեր ուշադրությունը հիմնականում սևեռվել է Ս.Վահագնի «Արշիլ Կորքի» կենսագրական վեպի գլխավոր հերոսի՝ ամերիկահայ գեղանկարիչ Ա.Գորկու /Ոստանիկ Ադոյան/ /1902-1948/ ճակատագրի ու ներաշխարհի բացահայտման վրա:

2. Ընդգծել ենք, որ հեղինակը սփյուռքահայ գրականության տիրույթում ստեղծագործել է՝ հարելով նոր կարոտի գրականության հոսանքին, առաջնորդվելով նորովի ըմբռնված ռեալիզմի ոճամտածողության սկզբունքներով:

3. Վիպասանի գերխնդիրն է եղել. Ցեղասպանությունից փրկվելով՝ ԱՄՆ-ում ապրող և ստեղծագործող, հետագայում միջազգային ճանաչման արժանացած հայ նկարչի մարդկային էության և սյուրռեալիստական, վերացական-արտահայտչապատկան ոճով ստեղծագործությունների մեջ բացահայտել նրա հայկականության դրսևորման առանձնահատկությունները՝ միաժամանակ ցույց տալով նրա ստեղծագործությունների կապը ազգային ու համամարդկային, հումանիստական ու գեղագիտական արժեքների հետ:

4. Ս. Վահագնի «Արշիլ Կորքի» վեպը արդի հայ կենսագրական վեպի բնագավառում արժեքավոր ձեռքբերում է:

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. **Ազատյան Ե.** *Սարգիս Վահագնի «Արշիլ Գորկի» վեպը* // Վահագն /Փաթափության/ Սարգիս, Արշիլ Գորկի, Երևան, «Վերնատուն մեդիա» ՍՊԸ, 2022: 232 էջ:
2. **Գորկի Ա.** /*Ադոյան, Նամակներ, /առաջաբանը՝ Շ.Խաչատրյանի/*: Երևան: «Գրաբեր»: 2005: 180 էջ:
3. **Դանիելեան Ս.** *Ծրագիր սփյուռքահայ գրականության պատմության*, Երևան, «Չանգակ-97», 2004, 40 էջ:
4. **Խաչատրյան Շ.** *Արշիլ Գորկի Ոստանիկ Ադոյան /1902-1948/*: Երևան: «Գրաբեր»: 2011:120 էջ:
5. **Խաչիկյան Գ.** *Կենսագրական վեպ ամերիկահայ նշանավոր գեղանկարիչ Արշիլ Գորկու մասին*, / Ազգ /հասարակական-քաղաքական վերլուծական շաբաթաթերթ/ Երևան, 2017, 18 օգոստոսի, էջ Գ-Դ:
6. **Ղազարյան Վ.** *Արշիլ Գորկին և կարոտախոր* // Հայոց ցեղասպանություն-100, ճանաչումից՝ հատուցում: Երևան: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.: 2016: 773 էջ:
7. **Պետրոսյան Ա.** *Եկա, որ մնամ*, Երևան, «Սովետ. գրող» հրատ.: 1986: 331 էջ:
8. **Վահագն Ս.** *Արշիլ Կորքի*, Լոս Անճելոս: 272 էջ:
9. Литературная энциклопедия терминов и понятий. Под ред. А.Николюкина. Институт научной информации по общественным наукам РАН. М. НПК «Интелвак», 2001, 1600 стр.
10. **Гиленсон Б.** *История зарубежной литературы второй половины XX – начала XXI века, учебник для вузов, 2-е издание*, переработанное и дополненное, Москва, "Юрайт", 2023, 274 с.
11. **Никитина И.** *Философия искусства*, Москва, Изд. "Омега", 2008, 560 с.

References

1. **Azatyany Ye.** The Novel “Arshile Gorky” by Sargis Vahagn//Vahagn /Pataputyan/ Sargis, Arshile Gorky [Sargis Vahagni “Arshil Gorky” vepy]. Yerevan, “Vernatun Media” LLC, 2022. 232 p.. (in Armenian)

2. **Gorky A. /Adoyan/,** Letters, /Introduction by Sh. Khachatryan/ [Namakner]. Yerevan. «Graber» 2005. 180 p.. (in Armenian)
3. **Danielian S.** Program for the History of Armenian Diaspora Literature [*Tsragir spyurkahay grakanutyanyan patmutyanyan*]. Yerevan, «Zangak-97», 2004, 40 p.. (in Armenian)
4. **Khachatryan Sh.** Arshil Gorky Vostanik Adoyan /1902-1948/[Arshile Gorky Vostanik Adoyan (1902-1948)]. Yerevan. Graber. 2011. 120 p.. (In Armenian)
5. **Khachikyan G.** Biographical Novel about Famous Armenian-American Painter Arshil Gorky, «Azg» (Weekly Social-Political Analytical Newspaper) [*Kensagrakan vep amerikahay nshanavor geghankarich Arshil Gorku masin*]. Yerevan, 2017, August 18, pp. G-D. (in Armenian)
6. **Ghazaryan V.** Arshile Gorky and Nostalgia //Armenian Genocide-100, from recognition to retribution [*Arshile Gorkin ev karotakhty / Hayots Tseghaspanutyun – 100, chanachumic hatucum*]. Yerevan. RA NAS «Science» publication, 2016, 773 p.. (in Armenian)
7. **Petrosyan A.** I came to stay [*Yeka, vor mnam*]. Yerevan, «Soviet writer», 1986. 331p.. (In Armenian)
8. **Vahagn S.** Arshile Korqy [*Arshil Korqy*], Los Angels. 272 p.. (in Armenian)
9. Literary Encyclopedia of Terms and Concepts [Literaturnaya entsiklopedia dlya terminov i ponyatiy]. Edited by A. Nikoliukina. Institute of Scientific Information on Public Sciences, RAS. M. «Intelvak», 2001, 1600 p..(in Russian)
10. **Gilenson B.** History of Foreign Literature of the Second Half of the XX – Beginning of the XXI century [*Istoriya zarubejnoj literaturi vtoroy polovini XX – nachala XXI veka, Uchebnik*]. Textbook for Higher Education Institutions, 2nd edition, Moscow, «Yurayt», 2023, 274 p.. (in Russian)
11. **Nikitina I.** Philosophy of art [*Philosophiya iskustva*]. Moscow, «Omega-L», 2008, 560 p.. (in Russian)

Ընդունվել է / Принята / Received on: **28. 09. 2024**

Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: **21. 10. 2024**

Հանձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for Pub: **12. 12. 2024**

Տեղեկություններ հեղինակի մասին

Գագիկ Վահեի ԽԱՉԻԿՅԱՆ՝ բան. գիտ. դոկտոր, ՇԳՀ-ի հայոց լեզվի և գրականության ամբիոնի պրոֆեսոր, Գյումրի, ՀՀ, էլ. հասցե՝ gagikkhachikyan@gmail.com // orcid.Id/0009-0008-8797-7442

Gagik Vahe KHACHIKYAN: Doctor of Philology, Professor of the chair of the Armenian Language and Literature of SHSU, Gyumri, RA, e-mail: gagikkhachikyan@gmail.com // orcid. Id/0009-0008-8797-7442

Гагик Вагеович ХАЧИКЯН: доктор филол. наук, профессор кафедры армянского языка и литературы ШГУ, Гюмри, РА, эл-адрес: gagikkhachikyan@gmail.com // orcid.Id/0009-0008-8797-7442